

ԲԱԶՄԻՄԱՍՏ ԲԱՌԵՐԻ ԵՎ ՀՈՄԱՆԻՇՆԵՐԻ
ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՂԻՇԵ ՀԱՐԵՆՑԻ «ԳԻՐԸ
ԾԱՆԱԴԱՐՅԻ» ԺՈՂՈՎԱԾՈՒՄ

Չարենցի չափածոյի բառապաշարը հարուստ է ու բազմազան: Մեր գրական լեզվի պատմության մեջ բառապաշարի հարստությամբ ու բազմազանությամբ Չարենցի ստեղծագործությունները գրավում են առաջնակարգ տեղերից մեկը:

Չարենցը պատմական իրականությունն արտահայտել է լեզվական բարձր արվեստով: Սա պայմանավորված էր նաև նրանով, որ նրա նախորդներն իրենց ստեղծագործություններում արդեն մշակել էին հայ գրական լեզվի զարգացման ու ժողովրդականացման առողջ միտումներ: Չարենցը չէր կարող բավարարվել իր նախորդների լեզվական մվաճումներով, նրանց բառապաշարով, որովհետև նոր ժամանակաշրջանը, պատմական իրադարձություններով հարուստ իրականությունն արտահայտելու համար անհրաժեշտ էին լեզվական նոր միջոցներ, հարուստ բառապաշար:

Չարենցն օգտվել է հայ գրական լեզվի բառապաշարի տարբեր շերտերից, սակայն ոչ միաչափ:

Ըստ բառաշերտերի՝ «Գիրք ճանապարհի» ժողովածուում առկա են ընդհանուր հայերեն բառեր, որոնք բառապաշարի հիմնական մասն են կազմում և հայոց լեզվի բառապաշարի տարբեր շերտերին պատկանող, ոճական յուրահատուկ երանգ ունեցող բառեր՝ գրաբարյան, ժողովրդախոսակցական, բարբառային բառեր, օտարաբանություններ, նորաբանություններ և փոխառյալ բառեր:

Յուրաքանչյուր գրող յուրովի է օգտվում մայրենի լեզվի ընդհանուր բառապաշարից: Չարենցը բավական հմտորեն ու համարձակ կերպով է օգտվել հայ գրական լեզվի ընդհանուր բառերի *խմաստային բազմազանությունից* և իր բանաստեղծական բառապաշարը հարստացրել է նույն բառերի տարբեր իմաստների նուրբ կիրառություններով: Այսպես օրինակ՝ *ծեր* բառը, որ մեր լեզվում ունի ծերունի, զառամյալ, ալևոր, տարիքոտ իմաստները, Չարենցը գործածում է նաև հին, անցած, սպիտակ իմաստներով.

Օ՛, ռամիկ կյանքի անգո պատկեր, ...Եվ ահա ծեր (սպիտակ)

Դարերում հեռու, ու հին, ու ծեր... (անցած) Մազերին նրա... իջավ
մառախուղ...

«Սասունցի Դավիթ» պոեմում դեպքերն ավելի պատկերավոր նկարագրելու նպատակով՝ հեղինակը անծիր բառը, որ նշանակում է ծայր՝ սահման չունեցող, գործածել է մաս մեծ, ուժգին, անթիվ, անհամար իմաստներով.

Մոռնչաց Մելիքն ահով *անծիր...* (մեծ)

Մրրկվեց այսպես թափով *անծիր...* (ուժգին)

«Ափսո՛ս, Մհերի հրեղեն ծի՛,

«Ջրահներ անգին, գանձե՛ր անծիր... (անթիվ, անհամար)

Զարենցը հաճախ որոնել է բառերի հին իմաստները, վերականգնել է դրանց մոռացված նշանակությունները՝ ավելի հարստացնելով իր լեզվի բառապաշարը։ Օրինակ՝ *աղերսել* բառը, որն այժմ գործածվում է իբրև *խնդրել*, *աղաչել* բայերի հոմանիշ, իր հին իմաստով նշանակել է մաս ինքն իրեն արդարացնել, ջատագովել, չքնեղանալ։ Դենց այս վերջին իմաստով էլ Զարենցը գործածել է *աղերսել* բառը «Սասունցի Դավիթ» պոեմում.

Գլուխ խոնարհեց ազգով-ցեղով,

«Քոնն է»-աղերսեց «երկիր ու հող»...

Վերը նշված օրինակներից երևում է, որ Զարենցը մեծ հմտությամբ է օգտվել հայոց լեզվի բառապաշարից, բառերի իմաստների բազմազանությունից, և ինքն էլ նպաստել է դրանց զարգացմանը։

«Գիրք ճանապարհի» ժողովածուի լեզվին առանձնահատուկ հարստություն ու գեղեցկություն է տալիս մաս *ՀՈՍԱԼԻՆԵՐԻ* գործածությունը։ Հոմանիշների ընտրությունն ու ճիշտ կիրառությունը մեծ նշանակություն ունեն բանաստեղծական խոսքի համար։ Հոմանիշների դերն անգնահատելի է խոսքը միօրինակությունից ազատ պահելու, արտահայտությունը հաճելիորեն բազմազան դարձնելու գործում։ Հաճախ անհրաժեշտ է լինում, որ խոսքային փոքր հատվածում արծածվի մույն հասկացությունը։ Սիս այսպիսի դեպքերում Զարենցն իր պոեմներում առատորեն գործածում է հոմանիշներ։ Այսպես օրինակ՝ «Դեպի լյառը Սասիս» պոեմում *մազ* իմաստն արտահայտելու համար գործածում է *ծամ*, *գիսակ* հոմանիշները.

Կանգնեց իր դեմ աղջիկը. - ոսկե *գիսակներով* ...

... Այն *ոսկեծամ աղջիկը* - Շարլոտա Շուլցը :

Ինչպես երևում է օրինակից, հոմանիշների գործածությամբ հեղինակը խուսափում է անհարկի կրկնություններից, որը խոսքը դարձնում է ոչ արտահայտիչ։ Ժողովածուում շատ են մեծ օրինակները։ Սիս այդպիսի մի օրինակ ևս, որտեղ նշված հոմանիշները՝ առաջնորդ - ղեկավար, հեղինակը գործածում է խոսքը միօրինակությունից զերծ պահելու համար.

Օ՛, որ, Օ՛, որ *առաջնորդը*,

Որ ղեկավարն է արդյոք, որ մղել է մարտեր։

Հեղինակը երբեմն սովորական գործածական բառի հետ գործածում է բարձր ոճին պատկանող հոմանիշ, որը խոսքը դարձնում է ավելի արտահայտիչ ու պատկերավոր.

Եվ դուք գիտեք *հիմա*՝ այս հերկը,

Որ մշակում եք *արդ*... ծեր Գալիքի հերկն է...

Անհիմն է այն կարծիքը, թե հոմանիշների համատեղ գործածումը վնասում է խոսքի սեղմությանը: Համեմայն դեպս, դա չի կարող վերաբերել բանաստեղծական չեզվին, որտեղ հոմանիշների այդպիսի գործածմամբ հեղինակն ընդգծում է առանձնապես կարևոր նշանակություն ունեցող հասկացությունը, դա ներկայացվում է իմաստային անհրաժեշտ նրբերանգներով և ավելի է ուժեղացնում խոսքի արտահայտչականությունը: Հեղինակը այսպիսի օրինակ է գործածել «Սասունցի Դավիթ» պոեմում, որտեղ ուժ բառի իմաստն ավելի ընդգծելու համար միասին գործածել է ուժ, գործություն հոմանիշները.

«Ուժ, գործություն է տված բազկիդ...»

Երբեմն հոմանիշների միջև եղած իմաստային նրբություններն աննշան են: Այդպիսի դեպքերում բանաստեղծը նախապատվություն չի տալիս այս կամ այն հոմանիշին և իր միտքն ամբողջական ձևով արտահայտելու համար զուգահեռաբար գործածում է մի քանի հոմանիշներ, որոնք ուժգնացնում են հոմանիշի իմաստը, ինչպես վերը նշված օրինակում, կամ էլ իմաստային տեսակետից լրացնում են իրար: Այսպես օրինակ՝ «Սասունցի Դավիթ» պոեմում միննույն քառատողում *ծեր* իմաստի համար գործածում է *զառամ*, *ալեհեր* հոմանիշները, որոնք իմաստային տեսակետից լրացնում են միմյանց.

Դարձավ նա *զառամ* ու *ալեհեր*,

Եվ կամաց-կամաց դյուցազնին *ծեր*

Սկսեց պատել... վիշտ անբուժելի...

Այս օրինակներում *ալեհեր*, *զառամ*, *ծեր* հոմանիշների միատեղ գործածությունը միանգամայն տեղին է: Այսպես՝ *զառամ* բառը իր իմաստային կողմով լրացնում է *ալեհեր* բառին, որովհետև, երբ ասում ենք *ալեհեր*, ապա կարող ենք չհասկանալ մարդու մտավոր և ֆիզիկական ուժերի թույլ լինելը, որը կա նաև *զառամ* բառի իմաստի մեջ: Այդ է պատճառը, որ *ալեհեր* բառի հետ միաժամանակ գործածել է նաև *զառամ* հոմանիշը:

Թախանձել, խնդրել հոմանիշները իմաստային տեսակետից նույնպես լրացնում են միմյանց.

... Մտամելիքի մոտը գնաց,

Թախանձեց, խնդրեց վիզը ծռած...

Ընդգծված հոմանիշները լրացնում են միմյանց, որովհետև *թախանձել* չի նշանակում միմիայն *խնդրել*, այլ սաստիկ աղաչելով *խնդրել*: Այսպիսով *թախանձել* հոմանիշն իր իմաստային կողմով լրացնում է *խնդրել* բառին: *խնդրել* բառին հավելյալ իմաստ է արտահայտում նաև *աղերսել* հոմանիշը, որը նշանակում է սաստիկ աղաչելով, գութը շարժելու աստիճան *խնդրել*.

Գութ *կաղերսես* ռեսից,

Որ թողնի քեզ տանդ:

Չարենցը հոմանիշներ ընտրելիս երբեմն օգտվել է նաև գրաբարյան ձևերից: Այսպես՝ *ասել* բառին որպես հոմանիշ գործածում է բարբառել, ծայնել գրաբարյան ձևերը, որոնք խոսքին պատմական երանգ են հաղորդում.

«Դավիթ» - բարբառեց - «Ռամիկ գորեղ...

«Ո՛վ Դավիթ» - ծայնեց- «Այդ ու՞ր» ...

Ուսումնասիրությանն են ցույց են տալիս, որ Չարենցը գերազանց ձևով տիրապետել է գրական լեզվի օրինաչփություններին, հմտորեն օգտվել է գրական լեզվի բառերից, որոնց հաճախ հաղորդել է արտահայտչական նոր երանգներ: Իր պոեմների բառապաշարը հարստացրել է բառերի տարբեր իմաստների կիրառություններով և հոմոնիշների առատ գործածությամբ, որոնք իրենց իմաստային նրբությունների, ոճական ու կիրառական բազմազանությունների շնորհիվ կարևոր դեր ունեն գրական լեզվի, մասնավորապես բանաստեղծական լեզվի բառապաշարի մեջ:

«Գիրք ճանապարհի» ժողովածուի մեջ բազմիմաստ բառերի և հոմանիշների առատ գործածությունը Չարենցի բանաստեղծական խոսքը դարձնում են գունագեղ, պատկերավոր և արտահայտիչ: